արևապաշտ էին, պատերազմը արևապաշտութեան համար էր, մի խօսքով պատերազմը կրօնական էր, սուրբ էր: Եղիշէն այս հարցը բացատրում է նրանով, որ Վասակն էր քանդել այդ միաբանութիւնը*): Դորանով նաև յայտնվում է, որ հինգերորդ դարու հոգևորականութիւնը, որի նման մենք չենք ունեցել բոլոր քրիստոնէական դարերումը, խիստ անշան ազդեցութիւն է ունեցել ազգաբնակութեան վերայ: Այդ ապացուցվում է հետևեալ պատմական փաստով: Հայոց բոլոր այն ժամանակուայ հոգևորականութիւնը, Կաթուղիկոսն, նշանաւոր եպիսկոպոսները և երեցները, բոլորը Վարդանանց կողմն լինելով տասն նահանջները չեզոք են մնացել, չորսը ներգործել են պարսից կողմից և հաղիւ 60

*) Մանր օթ. Եւ իբրև այս ամենայն չարիք յաջողեցան նմա, քակեաց և զմիաբանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց, և Աղուանից՝ ոչ ետ յաւագ խաղալ և զաշխարհն Աղձնեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ: Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցա այլ ընդ այլոց ստութեամբ, առ այր մի, որոյ Վասակ անուն էր, յանոց Մամիկոնէից՝ որ կան ի ծառայութեան Յունաց: Եւ 'ի թշուառութեան ժամանակին այրն այն սպարապետ էր ստորին Հայոց և հաւատարիմ զորացն Հոռոմայ ի սահմանին Պարսից, և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք իւրովք: Եգետ այս Վասակ զայն Վասակ իւր գործակից ի մեծամեծ չարիսն՝ յոր միաբանեցին երկոքեանն:

Եղիշէ էջ. 136.